



Գևորգյան Հոգևոր Ճեմարան



*«Վաչե և Թամար Մանուկյան»
Մատենադարան*

Գիտաժողովի հայտարարություն

2017 թ. լրանում է Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու Եռամեծար Հայրապետներից Սբ. Հովհան Օձնեցու գահակալման 1300-ամյակը:

Այս նշանավոր հորելյանի առթիվ կազմակերպվում են մի շարք միջոցառումներ, հրատարակվում են գրքեր՝ նպատակ ունենալով վերարժևորել Եռամեծար Հայրապետ Սբ. Հովհան Օձնեցու գործունեությունը:

Վեհափառ Հայրապետի օրհնությամբ և Գուգարաց թեմի առաջնորդ Գերշ. Ս. Սեպուհ արք. Չուլջյանի առաջարկությամբ Գևորգյան Հոգևոր Ճեմարանն ու Ս. Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» մատենադարանը համատեղ նախաձեռնել են «Հովհան Օձնեցի իմաստասեր կաթողիկոսը և նրա ժամանակը» թեմայով գիտաժողովը, որը տեղի կունենա ս/թ դեկտեմբերի 5-ին:

Գիտաժողովին կարող են մասնակցել հայագիտությամբ և աստվածաբանությամբ հետաքրքրված անձինք:

Խնդրում ենք՝ զեկույցների թեմաների առաջարկությունները հակիրճ նկարագրականով (շուրջ 250 բառ) ներկայացնել Գևորգյան Հոգևոր Ճեմարան մինչև 2017 թվականի նոյեմբերի 10-ը (նկարագրականները և մասնակցության հայտերը կարող եք ուղարկել odzneci1300.conference@gmail.com էլ. հասցեով):

Տեղեկացնում ենք, որ գիտաժողովի զեկույցներն ի մի են բերվելու և հրատարակվելու Ս. Հովհան Օձնեցու գահակալման 1300-ամյակին նվիրված առանձին հատորով: